ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———————— 2020թ. N----Ա

ՈՐՈՇՈՒՄ

««ԿԱՐԻՆԵ ԱՎՈՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքի 13-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետով և 3-րդ կետով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի N93-Ն որոշմամբ, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության 2020 թվականի հունվարի 20-ի հ.14/7/1214-20 գրությամբ տրված համաձայնությունը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել «Կարինե Ավոյան Ռոբերտի» անհատ ձեռնարկատիրոջը սույն որոշման հավելվածում նշված տարածքում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

««ԿԱՐԻՆԵ ԱՎՈՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝

1. Ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են դիմել համայնքի ղեկավարին՝ ավագանու որոշմամբ իրենց կողմից նշված տարածքում ավտոկայանատեղ նախատեսելու համար և վճարել ամսական կամ տարեկան վճարը ամբողջ ավտոկայանատեղի տարածքի համար: Վճարի չափը հաշվարկվում է ըստ տվյալ ավտոկայանատեղում ավտոտրանսպորտային միջոցների կայանման տեղերի թվի և ավագանու կողմից սահմանված մեկ ավտոտրանսպորտային միջոցի դրույքաչափի:

2. Ավտոկայանատեղի ամբողջ տարածքի համար վճար վճարած ֆիզիկական և իրավաբանական անձինք կարող են սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունեն ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:

ՀՀ կառավարության 2012 թվականի հոկտեմբերի 10-ի N 1293-Ն որոշման հավելվածի 2-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝

ծառայողական ավտոկայանատեղ՝ ավտոկայանատեղ, որի կազմակերպման իրավունքը վճարված տուրքի դիմաց հանձնված է որևէ իրավաբանական կամ ֆիզիկական անձի, որը կարող է սահմանափակել կամ չսահմանափակել տվյալ ավտոկայանատեղում այլ անձանց կողմից ավտոտրանսպորտային միջոցների կայանման իրավունքը, սակայն իրավունք չունի ավտոկայանատեղից օգտվողից գանձելու վճար:

Նույն որոշման հավելվածի 3-րդ կետի համաձայն՝ ավտոկայանատեղերի կազմակերպումն իրականացվում է համայնքի ավագանու որոշման հիման վրա: Ավտոկայանատեղերի տեղաբաշխումը համաձայնեցվում է ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության հետ: Եթե ավտոկայանատեղերը պետք է կազմակերպվեն զորամասերի, ռազմական կամ ազգային անվտանգության համակարգերի շենքերին կամ շինություններին հարակից տարածքներում, ապա այդ ավտոկայանատեղի տեղաբաշխումը համաձայնեցվում է նաև համապատասխան մարմինների հետ:

Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու թույլատրման խնդրանքով է դիմել՝ «Կարինե Ավոյան Ռոբերտի» անհատ ձեռնարկատերը:

ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության հետ համաձայնեցվել է ծառայողական ավտոկայանատեղի տեղաբաշխումը, որի վերաբերյալ առկա է նշված կառույցի 2020 թվականի հունվարի 20-ի հ.14/7/1217-20 գրությունը:

Ծառայողական ավտոկայանատեղը չի կազմակերպվելու զորամասերի, ռազմական կամ ազգային անվտանգության համակարգերի շենքերին կամ շինություններին հարակից տարածքներում:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ. 93-Ն որոշմամբ սահմանվել է Երևանի քաղաքային համայնքի վարչական տարածքում ծառայողական ավտոկայանատեղերի կազմակերպման կարգը:

Ելնելով վերոգրյալ իրավական ակտերի պահանջներից և սահմանված դրույթներից՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու «Կարինե Ավոյան Ռոբերտի» անհատ ձեռնարկատիրոջը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» որոշման նախագիծ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԿԱՐԻՆԵ ԱՎՈՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Կարինե Ավոյան Ռոբերտի» անհատ ձեռնարկատիրոջը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

««ԿԱՐԻՆԵ ԱՎՈՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Կարինե Ավոյան Ռոբերտի» անհատ ձեռնարկատիրոջը ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի 2020 թվականի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխությունների անհրաժեշտությունը բացակայում է:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու
2020 թվականի ---------- ----ի
N ------Ա որոշման

«ԿԱՐԻՆԵ ԱՎՈՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԱՎՏՈԿԱՅԱՆԱՏԵՂ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Հ/Հ	Դիմող	Ծառայողական ավտոկայանատեղի տարածքի հասցե	Կայանատեղում «ավտոտեղ»-երի քանակ (տարածքի չափեր) և կայանման ձև	Կազմակերպչի կողմից վճարված տեղական վճար	Այլ տրանսպորտային միջոցների կայանման սահմանափակում, աշխատանքային ռեժիմ
1	Ա/Ձ «Կարինե Ավոյան Ռոբերտի»	Հանրապետության հ. 3 հասցեի հարակից ճանապարհահատված	3 (22.5 զծմ), մեքենաների հաջորդական տեղաբաշխմամբ՝ մեկ շարքով	տարեկան	սահմանափակմամբ, աշխատանքային ռեժիմը՝ շուրջօրյա